# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ԳՐԱՆ ՊՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

**/ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ/**

**30 ԱՊՐԻԼԻ, 2022թ.**

1. **ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ**
   Հայաստանի շախմատի ակադեմիա
2. **Գլխավոր հովանավոր**
   ArLeAM ընկերություն «Դուռ» ապրանքանիշով
3. **ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ**
   Մրցաշարին կարող են մասնակցել Հայաստանում գործունեություն ծավալող և իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված բոլոր իրավաբանական անձիք: 2300-ից ավել ազգային կամ միջազգային վարկանիշ ունեցող շախմատիստներին, ինչպես նաև շախմատի մասնագիտացված մարզադպրոցներին չի թույլատրվում մասնակցել մրցաշարին:
4. **ՄՐՑԱՆԱԿՆԵՐ**

   Հիմնական մրցանակներ.

   - 1-ին տեղ գրաված թիմ
   - 2-րդ տեղ գրաված թիմ
   - 3-րդ տեղ գրաված թիմ

   Հատուկ մրցանակներ.

   - լավագույն արդյունք ցույց տված մասնակից /1-4-րդ խաղատախտակի վրա առնվազն 5 խաղ խաղալու դեպքում/,
   - լավագույն արդյունք ցույց տված կին մասնակից /առնվազն 4 խաղ խաղալու դեպքում/
   - սփոփիչ մրցանակ /վերջին 7 տեղերը գրաված թիմերի միջև ընտրվելու է վիճակահանությամբ/:
5. **ԺԱՄԿԵՏՆԵՐ**
   Գրան–Պրի մրցաշարը կանցնկացվի 5 փուլով: Առաջին մրցաշարը կանցկացվի 2022 թվականի ապրիլի 30-ին:

| | | |
|---|---|---|
| 30 ապրիլի | 11:00 | 1-ին տուր, |
| 30 ապրիլի | 11:30 | 2-րդ տուր, |
| 30 ապրիլի | 12:00 | 3-րդ տուր, |
| 30 ապրիլի | 12:30 | 4-րդ տուր, |
| 30 ապրիլի | 13:00 | 5-րդ տուր, |
| 30 ապրիլի | 13:30 | 6-րդ տուր, |
| 30 ապրիլի | 14:00 | 7-րդ տուր: |

6. **ՄՐՑԱԿԱՐԳ**
   6.1 Մրցաշարը կանցկացվի թիմային հաշվարկով՝ 4 խաղատախտակով (ցանկության դեպքում + 1 պահեստային խաղացող): Թիմի մասնակիցների կազմը փոփոխության ենթակա չէ Գրան Պրիի բոլոր փուլերի ընթացքում: Կազմակերպությունները կարող են ունենալ մեկից ավելի թիմ: Թիմի մասնակիցները պետք է հանդիսանան տվյալ կազմակերպության աշխատակից 2022 թվականի հունվարից:

6.2 Մրցաշարը կանցկացվի ըստ ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների, շվեյցարական մրցակարգով՝ 6-7 խաղափուլով /կախված մասնակից թիմերի քանակից/:

6.3 Յուրաքանչյուր մրցախաղում թիմային հաղթանակը գնահատվում է 2 միավոր, ոչ-ոքին՝ 1 միավոր, պարտությունը՝ 0 միավոր: Մրցանակների հավակնող թիմերի հավաքած միավորների հավասարության դեպքում հաշվի է առնվում

ա/ թիմի անդամների անհատական արդյունքների հանրագումարը,

բ/ թիմերի միջև անհատական հանդիպման արդյունքը,

գ/ ըստ խաղատախտակերի վրա ցույց տված արդյունքի (1, 2, 3, 4 խաղատախտակներ):

Եթե այդ ցուցանիշն էլ է հավասար, ապա անցկացվում է լրացուցիչ մրցախաղ (մրցաշար-մրցախաղ՝ կայծակնային խաղի կանոններով յուրաքանչյուր խաղացողին տրվում է 5-ական րոպե):

6.4 Ընդհանուր Գրան-Պրիի հաղթողը կորոշվի 5 մրցաշարերից 3-ում ցույց տված լավագույն արդյունքների հանրագումարով:

## 7. ԺԱՄԱԿԱՐԳ

10 րոպե մինչև պարտիայի ավարտը (2 վայրկյան հավելումով՝ յուրաքանչյուր քայլին, սկսած առաջին քայլից):

## 8. ՄՈՒՏՔԱՎՃԱՐ

Մրցաշարի յուրաքանչյուր փուլի մասնակցության վճարը յուրաքանչյուր թիմի համար կազմում է 25 000 ՀՀ դրամ:
Փոխանցումները անհրաժեշտ է կատարել հետևյալ բանկային հաշվին՝

| | |
|---|---|
| Շահառու՝ | Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամ |
| Բանկ՝ | Ամերիաբանկ ՓԲԸ |
| Հ/հ՝ | 1570018417800100 |
| ՀՎՀՀ՝ | 02560522 |

Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել կազմակերպության անունը, կոնտակտային հեռախոսահամար, մասնակցության վճար:

## 9. ԳՐԱՆՑՈՒՄ

Կնքված և ստորագրված հայտեր ներկայացնելու վերջնաժամկետն է 2022 թվականի ապրիլի 28-ը, ժամը 18:00-ն: Կանոնադրությանը կցված հայտը լրացված վիճակում կարող եք ուղարկել info@chessacademy.am էլեկտրոնային հասցեին:

## 10. ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ

Մրցաշարը կանցկացվի Հայաստանի շախմատի ակադեմիայում /ք. Երևան, Շևչենկո 34/:

## 11. Կոնտակտային տվյալներ

Հեռ՝ +374 10 448473, +374 43 448473, էլ. փոստ՝ info@chessacademy.am